## 14 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1895 Թ.

*Ամենայն անգամ՝ երբ աչք իմ՝ ձգում*
*Առաջիս դըրած չքնաղ պատկերին,*
*Բերկրութեամբ լցւում է հոգիս տըտում՝*
*Եւ կեանք է տալիս հաւատն իմ՝ մտքին։*

*Եւ ասում եմ ես — Ահա մարմնացեալ*
*Ե՛ւ Հայաստան ե՛ւ Մէր. Թունով չարութեան*
*Ապառաժ դարձած կարո՛ղ են դարձեալ*
*Փափկիլ՝ հայ մարդիկ՝ գութ մօրի նըման։*

*Եւ այս օրերում՝ երբ մենք անխարդախ*
*Կարօտ ենք սիրոյ, կարօտ հաշտութեան,*
*Երբ մենք միմեանցից աներկիւղ, անվախ,*
*Իրար պիտի մեկնենք բազուկ միութեան,*

*Մեր ատելութեան սառոյցն հալեցնել*
*Կարող է միայն այն Սիրոյ կըրակ,*
*Որ այս կրծքի մէջ Աստուած է վառել*
*Առաքելութեան որպէս սուրբ կըտակ։*

*Եւ այս կենդանի Հայաստան է միայն*
*Որ մեզ ապրելու տալիս է խրախոյս*
*Այն քաղցր յուսով, թէ վերածնութեան*
*Հեռու չէ եւ մեր պայծառ արշալոյս։*

Ե. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ